



FAÇADE EXTÉRIEURE - COLLÈGE ARMÉNIEN - VENISE

ԱՐՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՐԿԱՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ - ՎԵՆԵՐԻԱ

ՀԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-7

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

**Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA**

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրափինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնասպետյան, Պիլոեր Քաուփ

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլյուսի Երոտական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12-13-ին ՀԱԻ Սիյուտքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սիյուտքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սիյուտքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՈԴԿԱՃՆԵՐ

I. ՀՀ–ՍՓՅՈՒՌՔ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՒ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուբեն Կարապետյան
Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաժին Վարդանյան
Մարիամ Հակոբյան
Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն–սփյուռք գործակցության բաղադրիչ (ՀՀ – Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան
Մերձատր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերություններ. արդի միտումներ, մարտահրավերներ և հնարաւորութիւններ 34

Գայանէ Հակոբյան
Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում. հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան
Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Սյրեխան Զախարկևիչ
Արևելյան Եւրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան
Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները. իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան
Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները, այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանայան
Սյուզաննա Բարսեղյան
Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան
«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազյան

Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր
մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ***Նելլի Խաչատրյան******Մարիամ Հարությունյան***

Կրոնատաժության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան

Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի
կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՉԱՆԱՉԱՆՔ**V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ*****Կարեն Ասատրյան***

Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ
(19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան

«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ***Կասիա Արմենյան***

Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ***Տորք Դալայան******Լուսինե Հայրիյան******Անահիտ Խեչոյան***

Études arméniennes contemporaines, 2023, №15.

Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տազևսեան

Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ***Միզան Բոնպեան***

Հայագիտական ամստոնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին.

Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

230

I

ՀՀ–ՍՓՅՈՒՌԶ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ.
ՓՈԽԿԱՊԵՐ ԵՒ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրայր Ճեպեճեան, ա.գ.թ.

Արարական ծոցի Աստուածաշունչի ընկերություն, Քուէյթ

ՄԵՐՁԱԴՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԵՐ ԵՒ ՀՀ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐ, ՄԱՐՏԱՅՐԱԲԵՐՆԵՐ ԵՒ ՀՆԱՐԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքական և տնտեսական անորոշ և ճգնաժամային օրերը ու տակալին պատերազմական ու ապահովական իրավիճակները իրենց ժխտական անդրադարձը ունեցան և կ'ունենան Մերձավոր Արևելքի հայ համայնքներու իրավիճակին վրայ: Տեղի ունեցաւ ու տակալին կ'ընթանայ գաղթ՝ դէպի արևմտեան աշխարհ, Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Աստրալիա, Եւրոպա ու այլ տեղեր¹: 1991-ի ՀՀ անկախացումէն ետք՝ բաւական թիւով հայեր գաղթեցին ու կը գաղթեն մինչև օրս դէպի Հայաստան: Այսուհանդերձ, հայ իրականութիւնը Մերձավոր Արևելքի մէջ ունի պատմական ամուր կոտան և ենթահող՝ կապուած հողին, մշակոյթին և ազգային ինքնութեան: Այս գաղութները արմատացած են՝ անկախ իրենց ներկայ օրերու կարգավիճակներէն, և տակալին կը գործեն ու իրենց մասնակցութիւնը կը բերեն ՀՀ հետ յարաբերութիւններու իմաստով, ինչ որ պիտի վեր առնենք այս ուսումնասիրութեան մէջ:

Սոյն յօդուածը, ըստ երկրանուան այբբենական կարգի, նախ հակիրճ ձևով կը ներկայացնէ վերոյիշեալ իւրաքանչիւր գաղութի ներկայ վիճակը, մանրամասնօրէն կ'անդրադառնայ զեկուցողներու հետ հարցազրոյցներուն պատասխաններուն, և անոնց հիման վրայ կը կատարէ վերլուծումներ և յանձնարարականներ:

Հիմնաքառեր՝ Մերձավոր Արևելք, Միջին Արևելք, Սփիւռք, ՀՀ դեսպանատուն, հայ համայնքներ:

Յառաջաբան

Մերձավոր Արևելքի հայ գաղութները մեծ համեմատութեամբ կազմաւորուած են համիտեան ջարդերէն ետք՝ 1895–1896 տարիներուն, և մանաւանդ Հայոց Ցեղասպանութենէն ետք²: Այս գաղութները ծաղկեցան իրենց ազգային, համայնքային, միութենական, եկեղեցական և կուսակցական գործունէութիւններուն և կառոյցներուն միջոցաւ³:

Սակայն պատմական տուեալներ ցոյց կու տան, թէ հայերը Մերձավոր Արևելքի մէջ հաստատուած են վաղ ժամանակներէն սկսեալ: Յոյն պատմագէտ Հերոտոթոս կը խօսի հայ վաճառականներու մասին, որոնք հասած են Բաբելոն

¹ Bournoutian 2006, 25.

² Bournoutian 2006, 15.

³ Adalian 1991, 99.

և Նինուէ՝ Իրաք, Եփրատ և Տիգրիս գետերու միջոցաւ⁴: Մեծն Տիգրան Ք.ա. 83-ին գրաւած է Իրաքը և բաւական հայեր հոն տեղափոխուած են: Յորդանանի մէջ հայոց ներկայութիւնը սկսած է Խաչակիրներու օրերուն՝ 11-րդ և 13-րդ դարերուն⁵: Լիբանանի մէջ հայ իրականութիւնը նոյնպէս սկսած է Տիգրան Բ. թագաւորի օրերուն⁶: Նոյն տեղեկութիւններուն մէջ կը հանդիպինք Պաղեստինի և Սուրիոյ հայկական ներկայութեան: Եգիպտոսի մէջ հայերուն ներկայութիւնը սկսած է փարաւոններու 3-րդ գերդաստանի ժամանակ և 11-րդ դարուն արդէն 300.000 հայեր կ'ապրէին հոն⁷:

Արաբական Ծոցի երկիրներու մէջ հայկական գաղութներու կազմաւորումը շատ աւելի նոր օրերուն մէջ է: Քուէյթի մէջ գաղութին կազմաւորումը սկսած է 1950-ականներու վերջաւորութեան, իսկ ԱՄԷ-ուն մէջ՝ 1970-ականներէն սկսեալ: Պահրէյնի, Սէուտական Արաբիոյ և Օմանի մէջ փոքրաթիւ հայ գաղութը տակաւին կազմակերպուած կարգավիճակ չունի: Քաթարի մէջ, ուր մօտաւորապէս 300 հայեր կ'ապրին այսօր, հայ գաղութը սկսած է աստիճանաբար կազմակերպուիլ:

ԱՄԷ

Արաբական Միացեալ Էմիրութիւններուն (ԱՄԷ) մէջ գաղութի թիւը աճի մէջ է: Գաղութը ունի երկու հայկական եկեղեցի՝ Շարժայի և Ապու Տապիի մէջ: Շարժայի մէջ կայ շաբաթօրեայ վարժարան մը, որ ունի 270 աշակերտ, իսկ Ապու Տապիի մէջ՝ 50 աշակերտ: Ապու Տապիի հայերը ընդհանրապէս աշխատաւոր են, և այդ պատճառով անոնց թիւը միշտ կը տարուբերի:

ԱՄԷ-ը Միջին Արևելքի հայ գաղութներուն մէջ միակն է, որ ունի ՀՀ-էն ժամանած հայեր՝ մօտաւորապէս 1500 հոգի: Տեսակցութիւններու տուեալներուն համաձայն՝ հայաստանցիներ ընդհանրապէս ազգային կեանքէն հեռու են և չեն մասնակցիր գաղութի գործունէութիւններուն: Իրենց հետաքրքրութիւնը ընդհանրապէս առևտուր է և ունին անցողակի կարգավիճակ: ՀՀ դեսպանատան հետ հայ գաղութի յարաբերութիւնները լաւ են: Գաղութը օգնած է դեսպանատան շէնքի տրամադրութեան մէջ և օժանդակած անոր մատակարարման և կարգաւորման ծախսերուն:

ՀՀ – ԱՄԷ յարաբերութիւնները լաւ են: ԱՄԷ-ը որդեգրած է հաւասարակշռուած միջազգային քաղաքականութիւն: Անոնք զգուշաւոր մօտեցում որդեգրած են բոլորին հետ՝ նկատի ունենալով որ երկրին տարածքին կ'ապրին աւելի քան 160 ազգութիւններ:

ՀՀ – ԱՄԷ պետական յարաբերութեան իմաստով զրուցակիցներս կը հաւատան, թէ կարելի է աւելիով զարկ տալ զբօսաշրջութեան մարզին: ԱՄԷ-ը կրօնամոլ երկիր չէ: Շարժայի կառավարիչին ներդրումը ՀՀ մէջ եկեղեցիներ

⁴ Hovannisian 1997, 7.

⁵ Մարգարյան 2003, 368.

⁶ Մանջյան 2003, 291.

⁷ Մարգարյան 2003, 155.

վերանորոգելու մեջ կարելի է լաւ օրինակ ըլլայ՝ անելիով զարգացնելու կապերը: ԱՄԷ-ը՝ արաբական թէ միջազգային առումով, լաւ դիրքի վրայ կը գտնուի և կը վայելէ բարձր վարկ: Արժէ անելիով զարգացնել այս կապերը, – եղաւ հարցազրոյցին մասնակցողներուն յանձնարարութիւնը:

Ջրուցակիցներս պնդեցին, թէ Սփիւքի յանձնակատարի և անոր գրասենեակի հետ գործակցութիւն և որևէ տեսակի կապ չկայ: Անոնք կը նշմարեն հաղորդակցութեան, տեսակէտներու ու փոխհասկացողութեան պակաս: Վերջին շրջանին յանձնակատարի գրասենեակը ներկայացուցիչ մը նշանակած է պետութեան մօտ՝ առանց խորհրդակցելու ազգային պատկան կառոյցներուն հետ, ինչ որ ընդունելի չէ եղած հայ համայնքին համար:

ԱՄԷ-ը քաղաքացիութիւն չի շնորհեր օտարահպատակներուն, որոնք կ'ապրին հոն՝ նոյնիսկ երբ անոնք տասնամեակներէ հոն հաստատուած են կամ նոյնիսկ եթէ հոն ծնած: Հայերուն համար այս կը ստեղծէ խոչընդոտ մը, թէ ու՛ր պիտի հաստատուին, երբ իրենց աշխատանքային պայմանները փոխուին: Ըստ զրուցակիցներուս՝ անոնցմէ շատերը կը հաւատան, թէ ՀՀ հաստատուելու կարելիութիւնը առկայ է: Անոնցմէ շատեր արդէն տունէր գնած են ՀՀ, և ուրիշներ ալ՝ աշխատանք հիմնած հոն:

Եգիպտոս

Ջրուցակիցներս հաստատեցին, թէ գաղութին ներկայ թիւը մօտաւորապէս 2000 հայ է. անոնք Գահիրէ և Աղէքսանդրիա կը գտնուին: Գաղութին մեջ ակներև է աշխուժութիւնը. գաղութը կը փորձէ իր ազգային կեանքը պահել իր կարողականութիւններով: Եգիպտահայ գաղութն ունի ազգային կեանքը բեղուն պահելու համապատասխան կեդրոններ և կառոյցներ՝ մարզական, մշակութային ևն: Այս կառոյցները կրնան իրենց նպաստը բերել համահայկական իմաստով:

ՀՀ – Եգիպտոս պետական յարաբերութիւնները՝ քաղաքական, տնտեսական, ընկերային և զբօսաշրջութեան մարզերէն ներս բաւական լաւ են: Բայց տնտեսական աճի իմաստով մեծ արդիւնքներու տակաւին հասած չեն: Թուրք-Եգիպտական յարաբերութիւնները վերջին շրջանին սառած էին: Ըստ հարցազրոյցին մասնակցողներուն՝ այս առիթ ստեղծած է, որ հայկական հարցը գործածուի և արծարծուի պետութեան կողմէ: Այս իրավիճակը պատեհ առիթ նկատելով՝ հայ գաղութը լրատուական ցանցերու միջոցաւ և արաբերէն լեզուով յայտագիրներ կազմակերպած է՝ հայկական հարցին մասին: Արցախի հարցը՝ ոչ այնքան, որովհետև այդ զգայուն նիւթ է Եգիպտոսի համար, – հաստատեցին զրուցակիցներս: Հայաստանի համար Եգիպտոս նոյնքան զբօսաշրջութեան համար լաւ երկիր է:

ՀՀ դեսպանատան գործունէութիւնները Եգիպտոսի մեջ բաւական լաւ են՝ ըստ զրուցակիցներուս: Պետական պայմանագրեր ստորագրուած են, բայց կը մնայ զանոնք լաւագոյնս օգտագործել ի շահ երկու պետութիւններուն:

Հայագիտական կեդրոնը կը գործէ պետական համալսարանին մեջ, որ մտայղացումն էր առաջնորդարանին և Հայկական Բարեգործական Ընդհա-

նուր Միութեան: Ներկայիս՝ ՀՀ-ը ստանձնած է սոյն կեդրոնի գանձատրումը: Զրուցակիցներս անդրադառնալով այս նիւթին՝ ըսին, թէ կարիք կայ, որ աւելիով կազմակերպուի այս միջոցառումը:

ՀՀ դեսպանատան յարաբերութիւնները հայ գաղութին հետ բնական են և կարելիութիւն կայ աւելիով զարգացնելու զանոնք: Շատ բան կախեալ է դեսպանին պատրաստակամութենէն, – շեշտեցին երկու զրուցակիցներս: Գաղութը յարաբերութիւն և գործնական կապ չունի Սփիւքի յանձնակատարի գրասենեակին հետ: Եւ տակաւին առկայ են որոշ վերապահութիւններ՝ յանձնակատարի ըրած կարգ մը յայտարարութիւններուն առնչութեամբ:

Հայկական կողմը չէ յաջողած արաբական և իսլամական երկիրներու հետ յարաբերութիւնները լաւապէս օգտագործել, և անոնք մնացած են մակերեսային: Եգիպտոս Արևելեան Համագործակցութեան խորհուրդի անդամ է: ՀՀ ալ շատ մը ձևերով արևելքի կը թեքի: Հոս շահերը կարող են նոյնանալ, – եզրակացուցին զրուցակիցներս:

Եգիպտոս – ՀՀ պետական յարաբերութիւններու ապագայի հեռանկարներ կարելի է որոնել և յաջողցնել, – եղաւ հարցազրոյցին մասնակիցներուն տեսակէտը: Եգիպտոս Ափրիկէի դարպասն է, և անոնք կը հաւատան, թէ հնարաւորութիւնները շատ են այս իմաստով:

Իրաք

Իրաքի քաղաքական և ապահովական կացութիւնը իր ժխտական ազդեցութիւնը ունեցած է գաղութի նօսրացման մէջ: 2009-էն ետք՝ եկեղեցիի մը պայթումին որպէս հետևանք՝ քրիստոնեաներ, վտանգուած զգալով, սկսած են լքել երկիրը կամ ապաստան գտնել Քիւրտիստանի ինքնավար մարզին մէջ:

Քրիստոնեայ ներկայութիւնը ներկայիս կը հաշուէ մօտաւորապէս 250.000: Պաղտատի մէջ կան 1500–1800 հայեր: Մուսուլի մէջ մնացած է մէկ հայ ընտանիք: Զախոյի մէջ կան 1200 հայ անհատներ, Գարքուք՝ 100, և Պասրա՝ 200: Քրտախօս հայեր ալ կան ու տակաւին արաբական անուններ կրող հայեր:

ՀՀ – Իրաք պետական յարաբերութիւնները լաւ են՝ ըստ զրուցակիցիս: Առևտրական յարաբերութիւններ կան: Զբօսաշրջութիւնն ալ կը զարգանայ տեղացիներու մօտ, որոնք Հայաստան կ'այցելեն: Ամրան շրջանին շաբաթական երկու թռիչք կը կազմակերպուի դէպի Երևան: ՀՀ և Իրաքի հայ գաղութին յարաբերութիւնները լաւ են: Հայկական անձնագիրներ ստացողներ բաւական մեծաթիւ են: Նաև կան իրաքահայեր, որ տուններ գնած են ՀՀ ու տակաւին կան ՀՀ հաստատուողներ, – նշեց հարցազրոյցին մասնակցողը:

ՀՀ դեսպանատունը կը գործէ Պաղտատի մէջ և ունի հիւպատոսարան մը Քիւրտիստանի մէջ: Դեսպանատան յարաբերութիւնը լաւ կ'ընթանայ հայ գաղութին հետ: Դեսպանատունը իր մասնակցութիւնը և աջակցութիւնը կը ցուցաբերէ հայ գաղութի կեանքին և կարիքներուն՝ դպրոց, եկեղեցի, թէ այլ:

Իրաք կը հաշուէ մօտաւորապէս 43 միլիոն բնակչութիւն և հարուստ երկիր է իր բնական արտադրութիւններով՝ անկախ երկրին դժուարութիւններուն և ապահովական վիճակին: Առևտուրը լաւագոյն միջոցն է, որ արժէ զարգացնել

երկու երկիրներուն միջև: «Թրքական ապրանքները ողողած են իրաքեան շուկան: Ինչո՞ւ ոչ հայկականը», – ըսաւ գրուցակիցս:

Հայ գաղութը միշտ ալ հետամուտ է իր կապերը ջերմ պահելու ՀՀ հետ: Համահայկական վերջին խաղերուն՝ Իրաքէն մօտաւորապէս 30 հայ երիտասարդներ մասնակցած են, և անոնց ճանապարհորդութեան բոլոր ծախսերը հոգացած է ազգային առաջնորդարանը: Խաղերուն ընթացքին տեղի ունեցած են զեղծարարութիւններ ի նպաստ Արովեանի խումբին: Իրաքահայ երիտասարդները ընկճուած վերադարձած են ՀՀ-էն: «Այս երևոյթները պէտք է վերանան, որպէսզի յարաբերութիւնները աւելի լաւ ընթանան», – ըսաւ գրուցակիցս:

Սփիւռքի յանձնակատարի գրասենեակէն աւելին կ'ակնկալուի՝ որպէս կապերը ամրապնդող միատր գաղութին և Հայրենիքին հետ: Սփիւռքը կայուն վիճակ է, այս պարագային՝ Իրաքահայ գաղութը, որքան ալ որ շատ ըլլան երկրին մարտահրաւիրները: Պէտք է աւելի ներդրում և աշխոյժ կապ կայանայ Սփիւռքի յանձնակատարի և անոր անձնակազմին հետ: «Այս պաշտօնին համար սփիւռքահայ մը պէտք է նշանակուի, որ ծանօթ ըլլայ սփիւռքեան իրավիճակներուն», – ըսաւ գրուցակիցս: Նոյնքան նաև կ'ակնկալուի արևմտահայերէնի նկատմամբ սէր և գուրգուրանք ՀՀ պատկան մարմիններուն և հաստատութիւններուն կողմէ:

Լիբանան

Լիբանանահայութիւնը որպէս համայնք ճանչցուած է Լիբանանի պետական վարչամեքենային մէջ, ինչ որ այս գաղութին կու տայ շատ մը առաւելութիւններ: Տարիներու վրայ երկարած գաղութը ամրագրած է իր կառոյցները երկրին մէջ, և անոնք մեծապէս կ'օժանդակեն դիմագրաւելու ամէն տեսակի դժուարութիւններ: 1975-էն սկսեալ գաղութը աստիճանական անկում կրեց՝ տարբեր մակարդակներու վրայ: Ապագայի անորոշ հեռանկարները տակաւին առկայ են: Լիբանանահայ գաղութը Սփիւռքի կարևոր համայնքներէն կը նկատուի՝ հակառակ այն իրողութեան, որ գաղութին թիւը օրէ օր կը նօսրանայ:

Հայաստան-Լիբանանահայ գաղութ յարաբերութիւնները անցած են տարբեր փուլերէ: Ըստ կատարուած հարցազրոյցներուն՝ Սփիւռքի նախարարութեան օրերուն լաւ կապեր հաստատուած էին: 2018-էն ետք այդ յարաբերութիւնները խզուած են, և յանձնակատարի գրասենեակը իր գործունէութիւնը շատ յառաջ չի տանիր: Այս անգործութիւնը առկայ է, քանի յանձնակատարի գրասենեակի և գաղութի դասական կառոյցներու հետ կապ չկայ: Ազգային դասական կառոյցներու հետ յարաբերութիւնը շատ կարևոր գրաւական է լիբանանահայ գաղութին հետ բարօք գործակցութեան համար: «Պէտք է Սփիւռքը ծառայեցնել Հայրենիքը կերտելու համար: Այս գրասենեակի պատասխանատուութիւնը լիցքաւորելու է այս գիտակցութիւնը», – ըսաւ գրուցակիցներէն մին: «Լիբանանի հայ համայնքին մէջ կան կարողականութիւններ՝ քաղաքական, ընկերային, կրթական թէ այլ, որոնք կրնան օգտակար ըլլալ Հայաստանի: Հայաստանը պէտք է աւելի լաւ օգտագործէ Լիբանանի կարողականութիւնները», – ըսաւ ուրիշ գրուցակից մը:

Հայաստանեան-Արցախեան վերջին իրադարձութիւններուն ընթացքին նկատուեցաւ, որ ՀՀ դեսպանատունը բարձր մակարդակով դիւանագիտական պէտք եղած աշխատանք չկատարեց: Դեսպանատունը կը փորձէ լիբանանեան քաղաքական «մոզայիք»-ին մէջէն կարելի չափով շրջահայեաց ռազմավարութիւն մը ունենալ, – շեշտեցին զրուցակիցներս: Ըստ անոնց՝ դեսպանատան գործունէութեան մէջ կայ կարևոր այլ ուղղութիւն-նկատողութիւն մը, որ պէտք է վեր առնել՝ ֆրանքոֆոնի շրջանակներու մէջ ՀՀ առաջադրանքներն ալ ներկայացնել: Այս վերջինը Լիբանանի ունեցած պատեհութիւններէն մէկն է՝ որպէս ֆրանքոֆոնեան երկիր, որուն միջոցաւ ՀՀ-ը նոյնքան կրնայ իր օրակարգերը հասանելի դարձնել այս համագործակցութեան անդամ երկիրներուն:

ՀՀ և Լիբանան գանազան համաձայնագիրներ ստորագրուած են, բայց անոնք չեն իրականացած՝ տարբեր պատճառներով: Լիբանան բարեկամ երկիր է ՀՀ-ին: Միջազգային համաժողովներու ընթացքին Լիբանան միշտ ալ դրական կեցուածք կը որդեգրէ ՀՀ նկատմամբ:

«Արցախի հարցով արաբական աշխարհի մէջ Լիբանանը առաջին երկիրն էր, որ լաւ արձագանքեց հայկական, պետական ու տակաւին տեղական մակարդակներու վրայ: Հայ գաղութը իր բոլոր ուժերը ի սպաս դրաւ Արցախեան հիմնահարցի ներկայացումին և ի պաշտպանութիւն արցախահայութեան իրաւունքներուն: Պետական կեցուածքներն ալ նոյն ձևով հայանպաստ էին», – բացատրեց զրուցակից մը և շարունակեց. «Լիբանանեան տեղական լրատուական ցանցերու արձագանքները և յայտագիրները՝ արաբերէն լեզուով, Արցախեան հիմնահարցին նկատմամբ եղան նոյնքան քաջալերական: Լիբանան և Հայաստան երկու երկիրներ են, որոնք ունին նմանօրինակ փորձառութիւններ, որովհետև երկուքն ալ անցած են պատերազմի արհաւիրքէն: Լիբանան և լիբանանահայ գաղութը կրնան իրենց դերը ունենալ յարաբերութիւններու զարգացման մէջ՝ բաժնեկցելով փորձառութիւններ»:

«Հայաստան շրջափակուած երկիր է և օդային տարածքը լիարժէք պէտք է օգտագործել: Լիբանան որդեգրած է բաց երկինք (open sky) օդային համաձայնագիրը: Հայաստան լաւապէս կրնայ օգտուիլ այն պատեհութենէն», – անելցուց ուրիշ զրուցակից մը:

Լիբանան ունի համայնքային իւրայատուկ դրուածք՝ 19 կրօնական համայնքներ, որոնք պաշտօնապէս ճանչցուած են պետական վարչամեքենային մէջ: Կան արտաքին ուժեր, որոնք իրենց ազդեցութեան գօտիները ունին Լիբանանի կարգ մը համայնքներու մօտ: Օրինակի համար՝ սիւննի համայնքը Թուրքիոյ և Սէուտական Արաբիոյ հաշիւը կ'ընէ, շիա համայնքը՝ Իրանի: «Կան քաղաքական և տարածաշրջանային վերիվայրումներ, որ իրենց ազդեցութիւնները կրնան ունենալ և Հայաստան կրնայ հաւասարակշռել իր յարաբերութիւնները համա-լիբանանեան տեսադաշտի մէջէն և իր իրավիճակները ու մարտահրաւերները ներկայացնել ու իրեն ի նպաստ դիրքորոշումներ շահիլ: Հայկական գաղութը իր կարևոր դերը ունի և կրնայ ունենալ այս հաւասարակշռութեան գործօնին մէջ», – կը հաւատայ զրուցակից մը:

Յորդանան

Ներկայ դրությամբ՝ մեծ մարտահրավերներն մեկը ազգային ինքնությունը պահելու հարցն է, քանի միակ հայկական վարժարանը փակուեցաւ: «Հայերը համախմբելը դիւրին չէ, և նոյնպէս առկայ է միասնականութեան հարցը: Խառն ամուսնութիւններու թիւը աճ կ'արձանագրէ», – ըսաւ գրուցակիցս և շարունակեց. «Կայ երիտասարդութիւն մը, որ եթէ համախմբուի, կարելի է արդիւնաւոր գործ մէջտեղ բերել»:

Երուսաղէմի Հայոց պատրիարքի և պատրիարքարանի վերջին դժբախտ իրադարձութիւններէն ետք՝ հայկական գաղութը պետութեան կողմէ մեկուսացուած է, և հոգևոր առաջնորդը ոչ մէկ պետական գործունէութեան կը հրաւիրուի՝ ըստ գրուցակիցիս:

Յորդանան ճանչցած է ՀՀ-ը 1991-ի անկախացումէն ետք: «Երևան-Ամման քոյր քաղաքներ հռչակուեցան 2014 թուականին: Քաղաքական իրադարձութիւններու նկատմամբ Յորդանանի պետութիւնը զգուշաւոր և հաւասարակշռուած կեցուածք կ'որդեգրէ՝ ինչպէս, օրինակի համար, Արցախեան հիմնահարցին և նաև Յեղասպանութեան նկատմամբ», – հաստատեց գրուցակիցս: Կառավարութիւնը զգոյշ է, որ թրքական թէ այլ թափանցումներ չըլլան՝ յատկապէս որպէսզի ծայրահեղական շարժումներ ընթացք չառնեն երկրին մէջ:

ՀՀ դեսպանատան նստավայրը Դամասկոս է, և Սուրիոյ դեսպանը նաև հաւատարմագրուած է Յորդանանի դիւանագիտական աշխատանքները տանելու: Ըստ կատարած հարցազրոյցիս՝ դեսպանը կ'այցելէ Յորդանան տարին քանի մը անգամ, բայց համայնքին հետ յատուկ կապ չկայ: ՀՀ և Յորդանանի հայ գաղութի կապերը ատելի աշխոյժ եղած են Սփիւռքի նախարարութեան ժամանակ: Ներկայիս՝ այդ կապերը կապերը ատելի անհատական նախաձեռնութիւններ են: Վերջին 10 տարիներուն Յորդանանէն 40 ընտանիք հաստատուած է Հայաստան: «Յորդանանի գաղութը սէր և կապուածութիւն ունի Հայաստանի հանդէպ», – պնդեց գրուցակիցս:

Յորդանան գարգացած է բժշկական-դեղագիտական արդիւնաբերութեան մէջ: Փորձեր կատարուեցան՝ անհատներու կողմէ, Յորդանանէն ՀՀ ներմուծելու այս հնարաւորութիւնները և ճարտարարուեստը: Դժբախտաբար, շատ յառաջխաղացք չէ արձանագրուած, որովհետև այդ մնացած է անհատական նախաձեռնութեան ծիրին մէջ: ՀՀ-ը մեծապէս կրնայ օգտուիլ այս արդիւնաբերութենէն, – հաստատեց գրուցակիցս:

Սուրիա

Սուրիոյ մէջ երկու հիմնական գաղութներ կը գտնուին՝ Դամասկոս և Հալէպ, որոնք պատմութեան ընթացքին իրենց կարևոր դերը ունեցած են ներհայկական իմաստով ու տակաւին ՀՀ – Սփիւռք յարաբերութիւններուն մէջ: Այս իմաստով, այս հետազօտութիւնը պիտի ներկայացնէ այս երկու գաղութները անջատաբար:

Դամասկոս. Դամասկոսի հայ համայնքը այսօր համեստ է և փոքր: Գաղութը կը հաշուէ մօտաւորապէս 3000 հայեր: Բոլոր կազմակերպութիւնները կը

գործեն՝ կուսակցական, մշակութային, բարեսիրական ևն: Գաղութը ունի հինգ հայ դպրոց և երկու եկեղեցական առաջնորդարան՝ Առաքելական և Կաթողիկե:

Դամասկոսի հայ գաղութին մեջ այսօր կան խառն ամուսնություններ: Դամասկոսի հայկական վարժարանին դասարաններէն մէկուն մեջ ինը աշակերտներէն միայն երեքը հայ են՝ իրենց հօր կամ մօր կողմէ: Այս իմաստով և ապագայի տեսլականով՝ կայ ազգային և կրթական կարևոր առաքելություն: Արևմտահայ գիրքերու կարիքը մեծ է, որպէսզի աշակերտներուն ատելի լաւ ձեռով հայ գրականութիւնը և լեզուն ներկայացնէ:

Յարկ է մատնանշել, թէ հայերու դերը և դիրքը մեծապէս յարգուած և ընդունուած է Սուրիոյ մէջ: Արաբ սուրիացիներ՝ շատ մը խրթին և զգայուն աշխատանքային միջոցառումներու համար հայերու կը դիմեն և կամ զանոնք կը նշանակեն պատասխանատու դիրքերու վրայ, որպէսզի գործերը ատելի սահուն և լաւ ընթանան:

Դամասկոսի հայ գաղութի ապագան դժուար է գուշակել: Սուրիոյ պատերազմը և ներկայ օրերու պարտադրուած միջազգային տնտեսական շրջափակումը երկիրը դրած են ծանր պայմաններու մէջ: Ապագայի հեռանկարները անորոշ են՝ մանաւանդ երբ երիտասարդները կը մտածեն դուրս գալ երկրէն: Գաղութը արդէն սկսած է կորսնցնել իր երիտասարդ տարրը: ՀՀ մեկնողներ կան, բայց նաև կայ այն իրականութիւնը, որ ՀՀ-էն ետք կ'ուզեն Արևմուտք անցնիլ:

Ըստ գրուցակիցներու՝ Սուրիոյ պատերազմի ողջ ընթացքին ՀՀ դեսպանատունը պահեց իր ներկայութիւնը, և այս շատ լաւ ընկալուեցաւ պետութեան և տեղացի ժողովուրդին կողմէ: Դեսպանատունը նաև լաւ ձևով օգտակար եղաւ հայ գաղութի անդամներուն, որոնք կ'ուզէին դուրս գալ Սուրիայէն: «Հայաստանեան անձագիրները սուրիահայերուն համար եղան փրկութիւն և մեծապէս օգտակար էին ճամբորդելու համար: Դեսպանատունը օգնութեան հասաւ նաև տեղացի սուրիացիներուն՝ օժանդակութիւն հասցնելով, մանաւանդ վերջին երկրաշարժի աղէտին ընթացքին», – ըսաւ գրուցակիցներէն մին:

ՀՀ–Սուրիա պետական լաւ կապեր կան, բայց «լոպիիստական» գործ չկայ: Երկիրը իր քաղաքականութիւնը ունի, և կարելի է այդ քաղաքականութիւնը հասկնալ և օգտուիլ անկէ: Սուրիան պէտք ունի նոր շուկաներու, և ՀՀ-ը լաւ միջավայր է այս իմաստով: Պատմութեան փորձն ալ ցոյց տուած է, որ ՀՀ-ը Սուրիոյ համար միշտ ալ բարեկամ երկիր եղած է:

«Դամասկոսի հայ գաղութը ամուր կերպով կապուած է Հայաստանի: Սփիւռքի նախարարութեան օրերուն կար հաղորդակցութիւն, և յարաբերութիւնը գաղութին հետ շատ աշխոյժ էր: Ներկայ օրերու յանձնակատարի գրասենեակով այդ կապը գրեթէ չիկայ», – հաստատեցին գրուցակիցներս:

Հալէպ. Պատերազմական և տնտեսական վիճակները ծանր են Հալէպի հայ գաղութին համար: Գաղութի պատմական ամուր անցեալը եղած է կոռուան, որ ան այսօր տակաւին կը շարունակէ գոյատևել: Քաղաքական և ապահովական անկայունութիւնը կը շարունակուի: Օժանդակութիւնները կը շարունակուին նաև, և այս իրականութիւնը ձևով մը ժողովուրդը կը ստրկացնէ: «Տնտե-

սական ահաւոր անկումը իր ծանր հետևանքները ունի: Մարդոժի պակասը զգալի է: Հայ վարժարաններուն մէջ աշակերտութեան թիւի նուազումը ակներև է: Քարէն Եփփէ ճեմարանը, որ ունէր 1300 աշակերտ, այսօր 300 աշակերտ ունի: Մեր դպրոցները՝ որպէսզի կարենան գոյատևել, սկսած են ընդունիլ ոչ-հայ աշակերտներ: Հազուադիւս են այն դպրոցները, ուր աշակերտութիւնը ամբողջութեամբ հայեր են», – ըսաւ Հալէպէն գրուցակից մը:

Այս բոլոր տուեալներուն մէջէն ազգային-միութենական և եկեղեցական կեանքը աշխոյժ է: Մարդոժի հարցը առկայ է: «Պիտի շարունակենք հայկական գաղութ ունենալ, բայց աւելի նուազ թիւով», – ըսաւ հարցախոյզի անդամներէն մին: «Ապագան պիտի պահենք մնացողներուն հետ: Միշտ այսպէս եղած է», այլ գրուցակից մը ըսաւ:

«Սուրիա – Հայաստան պետական յարաբերութիւնները լաւ են և յարգաւիր: Հայաստանի կողմէ միշտ ալ հետաքրքրութիւն կայ Սուրիոյ նկատմամբ, և Հալէպի հիւպատոսարանի ներկայութիւնը կարևոր դեր ունի այս կապը պահելու մէջ», – ըսաւ հարցախոյզին մասնակցողներէն մին: ՀՀ Պաշտպանութեան նախարարութենէն ջոկատ մը կայ, որ ականազերծումի աշխատանքներ կը տանի Սուրիոյ մէջ, և այս դրական երևոյթ է, որ տեղացիներու կողմէ լաւ ընդունւած է: «Հայաստան նաև օգնութեան հասաւ Հալէպի վերջին երկրաշարժէն ետք, և այս ալ շատ լաւ ընդունուեցաւ պետութեան և ժողովուրդին կողմէ», – շարունակեց գորուցակիցս:

Յանձնակատարի գրասենեակի գործունէութիւնը ժողովրդային ընդունելութիւն չգտաւ Հալէպի մէջ: Նախարարութենէլ յանձնակատարի մակարդակի իջնելը «նուաստացուցիչ» կը համարուի գաղութին կողմէ: «Հայաստանը աւելի լաւ պէտք է կարևորէ Սփիւքի ներկայութիւնը և կարողականութիւնները: Ներկայ օրերու յանձնակատարի գրասենեակի հետ գրեթէ կապ չկայ», – ըսին բոլոր գրուցակիցներս:

Սուրիա – ՀՀ պետական կապերու իմաստով՝ Սուրիան հին փորձ ունի քաղաքական ոլորտներու մէջ: Արժէ աւելիով զարգացնել յարաբերութիւնները՝ յատկապէս տնտեսական մարզին մէջ: Սուրիոյ գործարանները չկրցան մտնել ՀՀ և զացին ուրիշ տեղեր: Սուրիան օգտուեցաւ ՀՀ-էն՝ բարեսիրական թէ՛ այլ բնագավառներու մէջ, բայց ոչ հակառակը: «Կայ նաև մուտքի արտօնագիրներու հարցը: Հայաստանցին կրնայ Սուրիա գալ առանց մուտքի արտօնագրի, բայց Սուրիացին չի կրնայ Հայաստան մտնել առանց նախօրօք արտօնութեան», – ըսաւ գրուցակից մը:

Արտագաղթը տակաւին կը շարունակուի՝ եթէ ոչ անցեալի չափերով, բայց տակաւին կայ: Բարեբախտաբար, մեծ թիւով ՀՀ ալ կը գաղթեն: «Հայաստան – հայ գաղութ յարաբերութիւններուն մէջ աւելի աշխուժութիւն պէտք է մտցնել՝ յատկապէս կրթական ոլորտին մէջ: Այս իմաստով կայ անցեալի փորձը, երբ Հալէպի և Դամասկոսի համալսարաններուն հետ ստեղծուած էր հայագիտական ամպլոնը, որ շատ չզարգացաւ սակայն: Նոյնքան կարելի է այլ բնագավառներու մէջ յարաբերութիւններ զարգացնել՝ ինչպէս գիտութիւն, բժշկութիւն թէ՛ այլ», – եզրակացուցին գրուցակիցներս:

Քուէյթ

Գաղութի ներկայ իրավիճակը շատ տարբեր չէ միջինարևելեան միւս գաղութներէն: Արտագաղթը առկայ է: 2019-ին հայ դպրոցի աշակերտութեան թիւը 350 էր և ներկայիս՝ 270 է: Տնտեսական վիճակը, ինչպէս նաև կեցութեան արտօնագիրներու խստացումը պատճառ կը դառնան, որ գաղութի անդամները ձգեն երկիրը: Քուէյթի և Արաբական Ծոցի բոլոր երկիրներու մէջ օտարները չեն կրնար հպատակութիւն ստանալ:

Հայերը Քուէյթի մէջ կու գան Սուրիայէն, Լիբանանէն և Իրանէն: Ընդհանրապէս երիտասարդներ են, որ կու գան աշխատանքի համար, և ոչ միշտ անոնք իրենց ընտանիքները իրենց հետ կրնան բերել: Ըստ գրուցակիցներուն՝ ամուսնութիւնները կը նուազին, և նոյնպէս՝ ծննդաբերութիւնները: Այս իրականութիւնները կ'ազդեն գաղութին ազգային կեանքին վրայ: «Գաղութին ապագան կախեալ է երկրին պայմաններէն՝ մէկ կողմէ կեցութեան արտօնագրի օրէնքներէն, ինչպէս նաև ընկերային և տնտեսական կացութենէն», – ըսաւ գրուցակից մը:

ՀՀ–Քուէյթ պետական յարաբերութիւններուն մէջ բովանդակութիւն չկայ, – հաստատեցին գրուցակիցները: Քուէյթի քաղաքականութիւնը ազդուած է Մէուտական Արաբիոյ քաղաքականութենէն: Այս վերջինը դիւանագիտական յարաբերութիւն և կապ չունի ՀՀ հետ: Զրուցակիցներուն համաձայն՝ Քուէյթի յարաբերութիւնը Թուրքիոյ և Ատրպէյճանի հետ շատ զօրաւոր է, և այս իրականութիւնը կ'ազդէ նաև ՀՀ հետ բարեկամական լաւ յարաբերութիւններ ունենալու վրայ:

Քուէյթը երկիր մըն է, որ մարդուծի պէտք ունի, և կը ներածէ զայն դուրսէն: ՀՀ-ը այս հաշուարկին մէջ չէ: ՀՀ-ը ունի մարդուծ և տարբեր մասնագէտներ, որոնք կրնան իրենց վաստակած եկամուտները ետ ՀՀ ներմուծել: «Հայաստանը պէտք եղած աշխատանք չի տանիր, որպէսզի Քուէյթի հետ այս տեսակի յարաբերութիւնները զարգանան: Քուէյթի համար Հայաստանի հետ յարաբերութիւնները ոչ-շահաւէտ միջոցառում են», – ըսաւ գրուցակիցներէն մէկը:

Քուէյթի հայ համայնքը միշտ ալ լաւ յարաբերութիւններ մշակած է ՀՀ հետ: Քուէյթի մէջ ՀՀ դեսպանատունը և հայ գաղութի կապերը ընդհանրապէս լաւ են: Գործակցութիւնը առկայ է, և կը յարգուին պատշաճութիւնները: Ըստ գրուցակիցներուն՝ ՀՀ վերջին քաղաքական իրադարձութիւններուն ժամանակ եղան որոշ քաշքշուքներ, բայց կարելի եղաւ կանխել զանոնք և միացեալ գործակցութեան օրակարգեր ստեղծել:

Քաղաքական առումով Քուէյթ ընդհանրապէս չուզեր ներգրաւուիլ միջազգային քաղաքականութեան մէջ: Դեսպանատունները՝ հայկական թէ այլ, քաղաքական աշխոյժ գործունէութիւն չեն տանիր: Ընդհանրական մթնոլորտ մըն է այս երկրորդը, նաև ՀՀ դեսպանատունն ալ նոյն վիճակին մէջ կը յայտնուի: Հակառակ այս յատուկ տեղական վիճակին՝ մշակութային, զբօսաշրջութեան և կրթական ոլորտներուն մէջ որոշ աշխատանքներ կը տարուին:

Քուէյթի հայկական գաղութի և Սփիւռքի յանձնակատարի և անոր գրասենեակին հետ կապ ու գործակցութիւն չկայ, – եղաւ գրուցակիցներուն հաստատումը:

տումը: Մէկ կողմէ կան վերապահութիւններ յանձնակատարի աշխատանքային ոճին առնչութեամբ, միւս կողմէ ալ գործակցութեան կարելիութիւններ չեն ստեղծուած:

Ապագայի տեսլականով՝ Քուէյթ անապատային երկիր է և շատ արտադրութիւններ չունի: Քուէյթ կը հենի արտաքին ներածումներու վրայ: Թրքական ապրանքները ողողած են տեղական շուկան: «Կան անձնական նախաձեռնութիւններ՝ Հայաստանէն ապրանքներ ներածելու, ինչպէս Քերմուկ հանքային ջուրը, բայց այս բոլորը սահմանափակ են: Տնտեսական գործօնը երկու երկիրներու միջև կախեալ է քաղաքական կապերէն, և այս վերջինին բացակայութիւնը չի նպաստեր տնտեսական կապերու բարելաւումին», – ըսաւ գրուցակից մը: Բայց կան պատեհութիւններ: Ըստ գրուցակիցներուն՝ ՀՀ-ը կրնայ համակարգչային և համացանցային ճարտարարուեստը արտածել Քուէյթ՝ նկատի ունենալով, որ ՀՀ-ը մեծ յառաջխաղացք կ'արձանագրէ այս մարզին մէջ:

Քուէյթի հայ գաղութը՝ իր տարբեր մարտահրաւերներուն մէջէն, կը փորձէ կառչած մնալ իր ազգային ինքնութեան ու անոր պահպանումին: Մինչև այն ատեն, որ Քուէյթ օժտուած է բնական հարստութեամբ, գաղութը կրնայ գոյատեւել իր մարդոժով: Նոյնպէս կարելի է, որ հայկական տարբեր գաղութներէ հայեր, աշխատանքային կարելիութիւններէ մեկնելով, հաստատուին Քուէյթ: Այս վերջինը շարունակուող գործընթացք է: Մեծ է թիւը գաղութի անդամներու, որոնք ՀՀ-էն արդէն բնակարաններ գնած են և կը ծրագրեն ՀՀ հաստատուիլ հանգստեան կոչուելէ ետք:

Եզրայանգումներ

Մերձաւոր Արևելքի երկիրները՝ արաբական աշխարհն է, որ նաև մահմետական կրօնքի կորիզը կը կազմէ (Լիբանանը տակաւին կը մնայ բացառութիւն, երբ կը շարունակէ պահել իր քրիստոնէական դիմագիծը): Աշխարհագրօրէն ալ շատ մօտ է այս տարածաշրջանը ՀՀ-ին: Այս իրավիճակը մեծապէս կրնայ նպաստել, որ հայեր ՀՀ հաստատուին, բայց նաև իրենց կապերը շարունակեն միջինարևելեան գաղութներուն հետ: Այս օրերուն շատ են պարագաները, ուր մարդիկ կ'ապրին մէկէ աւելի երկիրներու մէջ: Միջինարևելեան հայութեան համար այս նաև կարելիութիւն է, որ կրնայ օգտակար ըլլալ երկուստէք: Այս բոլորը կարևոր գրաւականներ են՝ յարաբերութեան սերտացման և փոխշահաւետ արդիւնաւոր գործակցութեան:

Միջինարևելեան երկիրները այսօր կը գտնուին տագնապալի և բախտորոշ պայմաններու մէջ: Հայ գաղութները պատմութեան ընթացքին ցոյց տուած են հանդուրժողականութիւն և գոյապայքարելու մարտունակ հոգի և կամք, և արաբական աշխարհն ալ միշտ պահած է իր բարեկամական և սիրալիկ կապը հայ ժողովուրդին հետ: Հայ գաղութները ունին յարգուած և ընդունուած կարգավիճակ տարբեր ոլորտներու մէջ՝ ներառեալ քաղաքական: Այս վերջինը մեծապէս կրնայ նպաստել ՀՀ-ին, որպէսզի բացուի և առնչուի արաբա-իսլամական աշխարհին՝ նկատի ունենալով անոր աշխարհաքաղաքական դիրքը: ՀՀ ունի իսլամ հարեաններ և ոմանց հետ չունի բարեկամական կարգա-

վիճակ: Արաբական աշխարհը կրնայ լաւ դաշնակից ըլլալ ՀՀ-ին, որպէսզի իր հարևաններուն հետ ունեցած մարտահրաւերներուն չտրուի կրօնական պիտակ:

Հայ գաղութները Միջին Արևելքի մէջ պէտք ունին ուժեղացման և լիցքաւորումի՝ մանաւանդ ներկայ քաղաքական, ապահովական և տնտեսական բարդ իրավիճակներուն մէջ: ՀՀ-ը պէտք է իր ռազմավարութեան մէջ նկատի առնէ միջինարևելեան հայ գաղութներու ուժեղացումը, ինչ որ նաև ՀՀ զօրացումն է: Հոս պիտի դարձնալ խնդրենք. անհրաժեշտ է Սփիւքի նախարարութեան վերստեղծումը և վերակազմակերպումը՝ ներկայ օրերու պահանջներէն և տուեալներէն մեկնելով:

Քաջալերական երևոյթ է տեսնել Արևելագիտութեան ինստիտուտի ուսանողները, որոնք կու գան Քուէյթ՝ արաբերէն սորվելու և աւելի ատակ դառնալու արաբական մշակոյթին և իսլամական քաղաքակրթութեան: Երևանի պետական համալսարանի և Պէյրութի Հայկազեան համալսարանի միջև ալ կայ գործակցութիւն: Արժէ աւելիով ընդհանրացնել այս երևոյթները և ընդգրկել Միջին Արևելքի այլ երկիրներ, որպէսզի աւելիով կարելի ըլլայ զօրացնել դիւանագիտական կառոյցներու անձնակազմերը:

Միջին Արևելքի իւրաքանչիւր երկիր ունի իր իւրայատկութիւնները: Արաբական աշխարհ է՝ բայց ոչ երբեք նոյնանման: Իւրաքանչիւրի տարբերութիւնները և իւրայատկութիւնները կրնան նպաստել ՀՀ քաղաքական, տնտեսական և ընկերային մարզերուն: Նոյնն է պարագան հայկական գաղութներուն: Իւրաքանչիւր գաղութ Միջին Արևելքի մէջ ունի իր կազմուածքը, որ տարբեր է մէկը միւսէն: Այս տարբերութիւնները կրնան դառնալ ուժ, որ կարելի է ներմուծել ՀՀ հզօրացման:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱՆՋԵԱՆ 2003

Սանջյան Ա.Կ., Լիբանան // Հայ սփյուռք. հանրագիտարան (խմբ. Հ. Այվազյան, Ա. Սարգսյան), Երևան, Հայկ. հանրագիտ. հրատ., 291–328.

ՍԱՐԳՍՅԱՆ 2003

Սարգսյան Ա.Ա., Հորդանան, // Հայ սփյուռք. հանրագիտարան (խմբ. Հ. Այվազյան, Ա. Սարգսյան), Երևան, Հայկ. հանրագիտ. հրատ., 368–369.

ՍԱՐԳՍՅԱՆ 2003

Սարգսյան Ա.Ա., Պետրոսյան Ա., Իրաք // Հայ սփյուռք. հանրագիտարան (խմբ. Հ. Այվազյան, Ա. Սարգսյան), Երևան, Հայկ. հանրագիտ. հրատ., 268–273.

ADALIAN 1991

Adalian R.P., The Armenian Genocide: Context and Legacy, // Social Education, 1991, № 55, 99–104.

BOURNOUTIAN 2006

Bournoutian G.A., A Concise History of the Armenian People, Costa Mesa, “Mazda” publisher, 2006, 485 p.

HOVANNISIAN 1997

Hovannisian R.G., The Armenian People: From Ancient to Modern Time, New York, St. Martin's press, 1997, 585 p.

Յատկութիւն

տեսակցութիւն	երկիր	սեռ	տարիք	ասպարէզ
1	ԱՄԷ	արական	63	գործարար
2	ԱՄԷ	արական	36	կղերական
3	Եգիպտոս	արական	62	բժիշկ
4	Եգիպտոս	արական	50	կղերական
5	Իրաք	արական	67	կղերական
6	Լիբանան	իգական	62	հրապարակագիր
7	Լիբանան	իգական	50	հրապարակագիր
8	Լիբանան	արական	55	հրապարակագիր
9	Լիբանան	արական	67	հրապարակագիր
10	Լիբանան	արական	53	հրապարակագիր
11	Լիբանան	արական	55	վարչական տնօրէն
12	Յորդանան	իգական	45	խորհրդատու
13	Դամասկոս	արական	51	կղերական
14	Դամասկոս	իգական	52	մանկավարժ
15	Հալէպ	արական	61	կղերական
16	Հալէպ	արական	57	մանկավարժ
17	Հալէպ	իգական	53	հրապարակագիր
18	Քուէյթ	արական	55	ատամնաբոյժ
19	Քուէյթ	արական	35	կղերական

Hrair V. Jebejian, Ph.D.

Bible Society in the Gulf, Kuwait

RELATIONS BETWEEN THE ARMENIAN COMMUNITIES IN THE NEAR EAST AND THE REPUBLIC OF ARMENIA: CURRENT TRENDS, CHALLENGES AND OPPORTUNITIES

Keywords: Near East, Middle East, Diaspora, RA Embassy, Armenian communities.

Relations between the Armenian communities in the Near East and the Republic of Armenia (RA) are of utmost importance for both sides. To better understand and evaluate the nature of the current relations – trends, challenges, and opportunities, between the RA and the Armenian communities in Egypt, Jordan, Kuwait, Iraq, Lebanon, Syria, and the United Arab Emirates, the author conducted a research – 19 open-ended interviews with Armenians aged 35 to 67 who live in these diaspora communities. This paper presents the findings gathered from these interviews. The results demonstrate the emphasis these various communities put on maintaining healthy, vibrant cooperation with the homeland and its representatives. The data show that each diaspora community has its own local economic, political, and social challenges. The interviewees highlighted the significance of

their relationship with the office of the Diaspora Commissioners. The data gleaned from the interviews underscore and enumerate the many opportunities – educational, economic, and political, that the RA can benefit from by establishing better and more productive relationships with the various countries selected for this study. The data lend ideas for future research, especially in the areas of exploring various avenues for strengthening Armenia-Diaspora relationships that would undoubtedly foster mutual understanding, partnership, joint action, combined effort, and mutual support.

Грайр Вагеевич Джебеджян, к.т.н.

Библейское общество Арабского залива, Кувейт

ОТНОШЕНИЯ МЕЖДУ АРМЯНСКИМИ ОБЩИНАМИ БЛИЖНЕГО ВОСТОКА И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ: СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ, ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ

Ключевые слова: Ближний Восток, Средний Восток, Диаспора, посольство РА, армянские общины.

Отношения между армянскими общинами Ближнего Востока и Республикой Армения (РА) имеют огромное значение для обеих сторон. Чтобы лучше понять и оценить характер нынешних отношений – тенденции, вызовы и возможности – между РА и армянскими общинами Египта, Иордании, Кувейта, Ирака, Ливана, Сирии и Объединенных Арабских Эмиратов, автор провел исследование: 19 открытых интервью с 35–67-летними армянами, проживающими в вышеуказанных диаспоральных общинах. В данной статье представлены результаты, полученные в ходе этих интервью. Данные показывают, что у каждой общины есть свои местные экономические, политические и социальные проблемы. Опрошенные подчеркнули важность своих отношений с офисом Уполномоченных по делам диаспоры. Данные, полученные в ходе интервью, подчеркивают и перечисляют многочисленные возможности – образовательные, экономические и политические, – которые РА может получить, установив более эффективные и продуктивные отношения с различными странами, выбранными для данного исследования. Полученные данные дают идеи для будущих исследований, особенно в области изучения различных путей укрепления отношений Армения–Диаспора, которые, несомненно, способствовали бы взаимопониманию, партнерству, совместным действиям, объединению усилий и взаимной поддержке.

Ներկայացվել է՝ 10.03.2025,

գրախոսվել է՝ 11.06.2025,

ընդունվել է՝ 10.07.2025:

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա

Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Մոսի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ / ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Ջախարկեիչ Ստեփան Արթուրի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
 Եւրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բազրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճեպեճեան Հրայր Վահէի

աստուածաբանության դոկտոր

Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինէ Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող

salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսէսի

սոցիալական գիտությունների թեկնածու

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի

Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի

պատմական գիտությունների թեկնածու

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային

թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող

poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի

բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,

ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաժին Վարդանի

պատմական գիտությունների թեկնածու

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ

vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական

գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող

r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan

On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan

Mariam Hakobyan

The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian

Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan

Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan

Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich

Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan

Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan

Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan

Suzanna Barseghyan

Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan

The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian

The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian

Mariam Harutyunyan

Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan

Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan

Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan

The Role of Weekly Newsletter “Hayastan” in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian

Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan

Lusine Hayriyan

Anahit Khechoyan

Études arméniennes contemporaines, 2023, N° 15 :
La presse de langue arméniennes en France et la création d’un espace transnational 200

Antranik Dakessian

Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan

The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян

О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян

Мариам Акопян

Политика идентичности как составляющая сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебебджян

Отношения между армянскими общинами Ближнего Востока и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян

Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре: точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян

Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич

Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян

Социально-культурные особенности армянской общины Варны: ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян

Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше, результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян

Сюзанна Барсегян

Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян

Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры: пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян

Уровень сохранения армянства у американских армян по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян

Мариам Арутюнян

Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян

Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян

Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян

Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян

Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян

Лусине Айриян

Анаит Хечоян

Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян

Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырнялян

40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 221

230

ՀԱՊԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան
ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատրյան
տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան
ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա):

